



ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO) ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանին և ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանին ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության առաքելությանը ցուցաբերած աջակցության համար պարգևատրել է շքանշանով:

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

09.09.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար Գ. Հովսեփյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժնի պետ Մ.Պետրոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Մ.Պետրոսյան /

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ

պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին տողի «22102.2» թիվը փոխարինել «21637.0» թվով, 2-րդ տողի «423116.0» թիվը փոխարինել «428910.7» թվով, 4-րդ տողի «84441.7» թիվը փոխարինել «84609.9» թվով, ընդամենը տողի «638692.3» թիվը փոխարինել «644190.0» թվով:

/Անհապական/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ. Պետրոսյան /

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 19-ի «2015 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի «1.1 ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ» բաժնի 2-րդ, 7-րդ, 10-րդ, 15-րդ և 19-րդ տողերի 8-րդ սյունակից հանել «1100-101» թիվը, 5-րդ տողի 8-րդ սյունակում «1100-101» թիվը փոխարինել «ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի տվյալների բազա» բառերով, 8-րդ տողի 8-րդ սյունակում «1100-101» թիվը փոխարինել «1000-401, 1000-402» թվերով, 23-րդ տողի 3-րդ սյունակում «կազմում» բառից հետո ավելացնել «2013թ. տարեկան հաշվետու տվյալներով» բառերը, 7-րդ սյունակում ավելացնել «դեկտեմբեր», իսկ 8-րդ սյունակում «ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի տվյալների բազա» բառերը, հավելված 3-ի «1. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՎՈՎԱԾՈՒՆԵՐ» ԲԱԺՆԻ 6-րդ տողը հանել, հավելված 2-ի «Ետազոտություններ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով. «4. 2015 թվականի Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն»:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակամանը հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2015 թվականի սեպտեմբերի 2-ից 3-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի կողմից կազմակերպված «Կլիմայի փոփոխության և հետևանքների գնահատման վիճակագրական հաշվառմանը նվիրված» երկրների վիճակագրական ծառայությունների վիճակագիր-փորձագետների համաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

3.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2015 թվականի սեպտեմբերի 7-ից 8-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա Միջավայրի Քաղաքականության Կոմիտեի /ՇՄՔԿ/ կողմից կազմակերպված Շրջակա միջավայրի մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբի 17-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

3.3. Հաղորդում՝ Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան քաղաքում 2015 թվականի սեպտեմբերի 12-ից 16-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի (SIAP) կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության արտադրության գործընթացում վարչական տեղեկատվության կիրառման կատարելագործում» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Վ. Արևշատյան/

4. Այլ հարցեր

ՀՀ ԱՎԾ խորհրդի անդամ Գ.Անանյանի առաջարկությունը ՀՀ ԱՎԾ հրապարակումների էլեկտրոնային տարբերակները ծառայության կայքէջում բացի PDF ձևաչափից՝ տեղադրել նաև Excel ձևաչափով:

Որոշեցին՝

1. Հանձնարարել ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն.Մուշեղյանին աշխատել ճյուղային բաժինների հետ, առաջիկա հրապարակումները բացի PDF ձևաչափից նաև Excel ձևաչափով ստանալու և ծառայության կայքէջում տեղադրելու համար:

2. ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանին քննարկել տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության հետ ՀՀ ԱՎԾ հրապարակումները Excel ձևաչափով ծառայության կայքէջում տեղադրելու տեխնիկական հնարավորությունները և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել աջակցություն:

19.08.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012թ. հուլիսի 9-ի թիվ 10-Ն, 12-Ն, 11-Ն և 16-Ն պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին նորմատիվ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական), «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (տարեկան), «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (ամսական) և «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ. Պետրոսյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012թ. հուլիսի 9-ի թիվ 10-Ն, 12-Ն, 11-Ն և 16-Ն պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին նորմատիվ որոշումները և հաստատել «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական), «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (տարեկան), «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական) և Ձև թիվ 1-ԿՇ (տարեկան), «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (ամսական) և «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները:

/Նորմատիվ/